

ՏԻՐԱՆ ԼՈՐՄԱԳՅՈՋՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Կոմիտասի հավաքչական, ստեղծագործական, ուսուցչական ու գիտական հսկայածավալ աշխատանքի արդյունքները, որից մեզ հասածը, ըստ երևույթին, իր գրառումների շատ փոքր մի մասն է կազմում, թերևս ոչ միայն չեն ուսումնասիրված պատշաճ մակարդակով, այլև դեռ չի կատարված անգամ նրանց խմբավորումը: Այնինչ Կոմիտասի ձեռագրերի ուսումնասիրությունը պետք է սկսել առաջին հերթին նրա ստեղծագործությունների ներքին խմբավորմամբ: Այստեղ էլ արդեն կերելի, թե դրանք բաղկացած չեն լոկ «ժողովրդական» ու «հոգևոր» երաժշտությունից: Դասակարգման կարևոր ճյուղերից մեկը Կոմիտասի ստեղծագործած կամ հավաքած «այլազգի» երաժշտությունն է լինելու, որը մաս իր մեջ բաժանվում է քրդականի (ավելի շատ ճանաչված), գերմանականի, թուրքականի և այլնի:

Մենք այստեղ ուզում ենք անդրադառնալ նրա ֆոնդերում գտնվող թուրքական երաժշտության բեկորներին: Նախ պետք է նշել, որ նրա՝ մեզ հասած թուրքական երաժշտության ստեղծագործությունները կարելի է երկու հիմնական խմբի բաժանել՝ իր հավաքածների և հորինածների: Հավաքածները մույնպես բաժանվում են երկու մասի. ամհատապես գրի առածների ու նրան այս կամ այն անձերի կողմից ուղարկվածների: Այստեղ մաս երկուսն է, որ այդ երգերից շատերն անձամբ ինքն է պատվիրել տվյալ անձանց: Կան երգեր, որոնք ակնհայտորեն գրված են ուրիշի ձեռքով ու պակասում է որևէ տեղեկություն կամ արձանագրություն ձեռագրատիրոջ մասին: Եվ, ի վերջո, կան մաս երգեր, որոնք արտագրվել են Կոմիտասի ձեռագրերից և արժեք են ներկայացնում նրանով, որ նրանց ընդօրինակված բնագրերի մի մասն այսօր արդեն գոյություն չունեն:

Դժբախտաբար, այսօր հնարավորություն չունենք լիովին ստուգելու, թե ուրիշի ձեռքով գրված նյութերից որոնք են իրեն ուղարկված և որոնք՝ իր գրառումներից ընդօրինակված, որոնց բնագրերը միգուցե այսօր պակասում են մեզ: Աճառյալն իր հուշերում Կոմիտասի մասին ասում է. «... հավաքեց մաս թուրքերեն երգերը: Երբ ես զարմանքով հարցրի, թե - Բեզ պես նշանավոր երգահանը ինչո՞ւ արժեք է տալիս թուրք այսպիսի հասարակ երգիչների երգերին, նա պատասխանեց, թե դրանք բնածին հանճարներ են և նրանց աշխատանքը մույնպես պետք է արձանագրել»: Կարծում ենք, որ այսքանը բավական է՝ պատասխանելու բոլոր այն հարցերին, որոնք կարող են առաջանալ այս խնդրում:

Թուրքական երաժշտության գրառումները գտնվում են Երևանի Գրականության և Արվեստի թանգարանի երաժշտական բաժնի Կոմիտասյան ֆոնդում, ամփոփված 11 ֆոնդային համարների տակ: Սրանք են՝ 348, 351, 352, 353, 354, 443, 444, 445, 522, 523 և 745 համարները:

Համար 348-ը Կոմիտասին ուղղված մի մամակ է¹, որը պարունակում է 7 թուրքական և 2 հոգևոր երգ («Օրհնեալ է Աստուած» և «Ով պարտիզպան»): Նամակի բովանդակությունից երևում է, որ այս երգերը Կոմիտասիում են արձանագրված, և Կոմիտասն ինքն է պատվիրել այդ երգերի գրանցումը մամակատերից, որի ինքնությունն անհայտ էր ցայսօր: Մեզ հաջողվեց ճշտել, դա Կոմիտասի ճեմարանական ընկեր Հարություն Հեքիմյանն է, որը երաժշտագետ Ռ. Աթայանի հրատարակած Կոմիտասի հատորներից 8-րդ հատորում սխալմամբ մշվում է որպես «Կոմիտասի զարմիկ» և «երաժշտականորեն օժտված մի երիտասարդ քյութահյացի»: Ամհրաժեշտ է մաս մշել, որ Հեքիմյանը քյութահյացի չէր:

Բոլոր երգերն արձանագրված են հայկական մոր ձայնանիշերով: Նյութը բաղկացած է 5 թերթից: Ստացված է Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանից 1952 թ.: Բոլոր 7 երգերի հեղինակները հայտնի են. երկուսը պատկանում են Օեֆքի բեյին, մեկը՝ Հաջը Արիֆ բեյին, մեկը՝ Սամթուրի Էթեմ բեյին, մեկը՝ Լևոն Էֆենդի խանջյանին, մեկն էլ՝ Հաջը Արիֆ բեյ կամ Նազըմ բեյին: Միայն երեքի հեղինակներն են մշված ձեռագրերում, մնացած 4-ը հայտնաբերված են մեր կողմից, իսկ այդ մի երգի հեղինակի անվան շփոթությունը առաջացել է այն պատճառով, որ մյուսում մշված հեղինակը չի համապատասխանում մասնագիտական հրատարակությունների մեջ մշվածին:

Համար 351 վավերագիրը ավելի ընդարձակ է, բաղկացած 55 երգից: Այս երգերն ընդօրինակել է Սպիրիդոն Մելիքյանը Կոմիտասի ձեռագրերից, որն, ըստ երևույթին, Կոմիտասի ֆոնդի 352 համարի մյուսն է, որը բայց պարունակում է 66 երգ (չնայած որ ընդհանուր 68 արձանագրված երգ կա այդ ժողովածուի մեջ, բայց վերջին երկուսը, ըստ երևույթին, ավելացվել են հետագայում): Այսինքն, Մելիքյանը բոլոր երգերը չի ընդօրինակել ու 11 երգ բաց է թողել: Գրված է հայկական մոր ձայնանիշներով բաղկացած 13 թերթից:

Կոմիտասի ֆոնդի 352 համարի վավերագիրը վերնագրված է «Արևելյան – թուրքական եղանակներ»: Ունի տարեթիվ՝ 15-11-1892: Հավանաբար այս տարեթիվը ոչ թե այս երգերի հավաքման, այլ մրանց մաքրագրման տարեթիվն է, որը կատարվել է Էջմիածին վերադառնալուց հետո: Նյութը բաղկացած է Կոմիտասի ձեռքով գրված 40 թերթից: Ըստ թանգարանի մատյանի, այս մյուսը ևս ստացված է մույն թվականին, ինչպես 348-ը, բայց այս անգամ ոչ թե Գարեգին Կաթողիկոսի անունն է մշված, այլ Ներսես Խոտավերդյանի: Մենք այն կարծիքին ենք, որ այս շփոթությունը մատյանի մեջ սպրդած սխալներից մեկն է, որը մաս մասամբ այն ժամանակվա աշխատողների անփորձությանն է վերագրվում:

Պլյասհայ երաժշտապետ Ներսես Խոտավերդյանն ուրիշ Կոմիտասյան ձեռագրեր կամ ընդօրինակություններ էլ էր ուղարկել Կիլիկիո Կաթողիկոսին, որն իր հերթին հավաքել ու Հայաստան էր ուղարկել: Այս մյուսի մեջ պարունակվող և ոչ մի երգի հորինողի մասին որևէ մշում չկա: Մեզ հաջողվեց առայժմ ճշտել այդ երգե-

¹ Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից: Երևան, 1967, էջ 210:

րից 19-ի հեղինակների անունները՝ Հաջը Արիֆ բեյ, Սամթորի Էթեմ բեյ, Ջիվան աղա և Լևոն Էֆենդի խանջյան - մեկական երգ: Այս գրառումը, մյուսների հետ համեմատած, մի շարք պատճառներով բավականին հետաքրքիր ու արժեքավոր կողմեր է պարունակում: Նախ, որ Կոմիտասը այստեղ ներկայացված բոլոր երգերը արձանագրել է անձամբ Կուտիմայի բնակիչներից, իր ծննդավայր այցելության ժամանակ:

Հետաքրքիր է նաև այն համագամանը, որ բացի 7-ից, բոլոր երգերի մոտ մշված է տվյալ երգը երգողի, այսինքն՝ Կոմիտասին ներկայացնողի անունը: Սույն անունների մեջ կան նաև Կոմիտասի անմիջական հարազատների՝ Սողոմոնյանների անունները, որոնք են՝ Հարություն աղա (հորեղբայր) - 5 երգ, Գյուլիմե (հորաքույր) - 3 երգ, Ջմրուխտ (հորաքույր) - 3 երգ, Սողոմոնյաններ: Բացի այս 3 հարազատներից, 18 հոգի ևս մասնակցել են Կոմիտասին թուրքական երգեր «մատակարարելու» գործին, որոնցից 11 երգով բոլորին գերազանցում է Հարություն Էֆենդի Հեքիմյանը՝ Կոմիտասի վերը մշված ճեմարանական ընկերը: Հետո գալիս են Թագուհի խորյան - 7 երգ, Սաչիկ Էֆենդի Բալանյան - 6 երգ, Արմենակ Էֆենդի Տիրումի - 4 երգ, 3-ական երգով՝ «շեքերջի» (քաղցրավենիք վաճառող) Թորոս աղան ու լուսանկարիչ Մաթևոս Փափազյանը, 2-ական երգով՝ Ներսես Էֆենդի Գրիգորյանը և Մարտիրոս Էֆենդի Վարպետյանը: Ապա 1-ական երգով հաջորդում են Հակոբիկ Թոփչյանը, Նազարեթ Էֆենդի Քայայանը, Մարիամ Հայրապետյանը, Մարիամ խորյանը, Հակոբ Մելքիսեթեյանը, Գառնիկ Էֆենդին, Թագուհի Բոյաջյանը, տիկին Քառուղիան ու Հարություն Էֆենդի Հայրապետյանը:

Վերջին շարքի մեջ մտնում է նաև այս աշխատանքին մասնակից միակ թուրքը՝ Ահմեդ Էֆենդի Սավջըն: «Սավջըն» թուրքերենում մշանակում է դատախազ: Վստահորեն կարելի է ասել, որ այս բառն այստեղ ոչ թե որպես ազգանուն է օգտագործված, այլ պարզապես մշված է մասնագիտությունը, քանի որ թուրքերը այդ թվականին (մինչև հանրապետության հռչակումը) ազգանուն չունեին, ունեին լոկ անուն կամ, լավագույն դեպքում, անուն հայրանուն: Երգերից երկուսը, ըստ Կոմիտասի մշումների, երգվել են 2-ական հոգու կողմից. մեկը Ջմրուխտ և Գյուլիմե Սողոմոնյանների, իսկ մյուսը՝ Ջմրուխտ Սողոմոնյանի ու Մարիամ Հայրապետյանի:

Այս գրառման մեջ հավաքված երգերը երկու տեսակ են՝ «շարքը»-ներ ու «թյուրքյու»-ներ: Շարքըները մասնագետ, կրթված երաժիշտների կողմից հորինված գրական և երաժշտական առումով առավել արժեքավոր ստեղծագործություններ են, իսկ թյուրքյուների մոտ պակասում են այդ հատկանիշներն ակնառու կերպով, քանի որ նրանք առավելապես ժողովրդական (ոչ մասնագետների կողմից հորինված) անանուն ստեղծագործություններ են: Շարքըների թիվը 43 է, իսկ թյուրքյուների՝ 22, երկու երգի դասավորումը հայտնի չէ:

Վերը մշած 19 երգերի հորինողները բոլորն էլ շարքըների հեղինակներ են: Քանի որ Կոմիտասը իր կենսագրության մեջ հատակորեն մշում է, որ հայրը և հորեղբայրը ձայնել դպիրներ են եղել, նաև թուրքերեն երգեր են հորինել, որոնցից «մի քանիսը» մա գրառել է իր՝ Կուտիմա այցելության ժամանակ, անտարակույս, խոսքը վե-

րաբերում է այդ 22 թյուրքյուններից, բայց Կոմիտասը որևէ տեղեկություն չի հայտնում այն մասին, թե այս 22-ից որոնք են պատկանում իր հարազատներին: Միայն մի դեպքում մեզ օգնության է հասնում Ս. Մելիքյանի արտագրած 351 համարի ձեռագիրը, որտեղ «Ախ, բու դիլի դյուշյուրդում սամա, յարիմ» երգի տակ կա մի փոքր և գրեթե անճշան մի ճշում՝ «եղնկ. Կոմիտ. Հ. ս. հօր», որը պարզապես նշանակում է «եղանակը՝ Կոմիտաս հայր սուրբի հօր»: Այստեղ ևս մի անգամ տեսնում ենք, որ ոչ միայն ինքնագիր ձեռագրերը, այլ նաև ընդօրինակություններն էլ կարող են իրենցից բարձր արժեք ներկայացնել և անգնահատելի ծառայություն մատուցանել: Մի թվացյալ անճշան տեղեկություն, որն, ըստ երևույթին, Կոմիտասից էր լսել, լուսավորում է մասամբ ևս մի խավար կետ: Ստորև բերում ենք սույն երգը հայերեն տառերով, ինչպես որ Կոմիտասն էր արձանագրել:

Ծարքը Հիզգամ

երգեց Յարութին աղա Սողոմոնեան

Պու տիլի տիւշիւրտիւմ սամա, եարիմ,

Պու տէմ պումա չարէ օլումմազ մը

Արա պուլտում պու տիլի եար էլիմտէն

Ջէֆի էտէլիմ կիւն պու կիւնտիզ

Սէվտիկիւմ կիմէ պիր թույի սեֆայա

Պէն չէքէմէմ պէօյլէ ճէվր ի ճէֆայա:

Սույն երգի իմաստի ըմբռնելիության մպատակով ուզում ենք այստեղ ավելացնել նաև սկզբնատողերի թարգմանությունը:

Ախ սիրտս քեզ եմ բաժին հանել, յարս

Արդյոք սրան մի ճար անել չի՞ լինի ...

Նշված թյուրքյուններից մի քանիսը մեծ հավանականությամբ կլինեն մինչև Կոմիտաս տարածում գտած սիրված թուրքերեն երգեր՝ մի մասը Կոմիտասի հարազատների կողմից, իսկ մյուս մասը՝ Կոմիտասի և նրա շրջանների մեջ հորինվածներ: Ի դեպ, չի բացառվում, որ սրանց մի մասը նույնպես հայերի ստեղծագործություններ լինեն, քանի որ անհավանական է, թե այնտեղի միակ երաժշտությամբ զբաղվողները Սողոմոնյանները լինեին: Հավանական է նաև, որ մի շարք երգեր ներկայացվել են նաև հենց նրանց հեղինակների կողմից: Վերը նշածի օգտին խոսում է մի հանգամանք ևս՝ այդ երգերի վերևի լուսանցքներում ճշումներ կան տվյալ եղանակներն իր ծրագրած ու սկսած օպերաների մեջ օգտագործելու մասին: Անհավանական է, որ Կոմիտասն այդ բանն աներ, եթե սույն եղանակը հարազատ ու հայի ոգուց բխած չլիներ:

Քանի որ այս վավերագիրն արձանագրված է շատ մաքուր ու կանոնավոր կերպով, հիմք ունենք փնտրելու նրա սևագրերը, բայց այդպիսիք գոյություն չունեն կոմիտասի ձեռագրերում: Մենք չենք կարծում, որ Կոմիտասն ինքը դրանք պահած չլիներ մաքրագրելուց հետո: Մեր այս պնդման հիմք են հանդիսանում նրա մաքրագրած և անգամ հրատարակած երգերի դեռ գոյություն ունեցող բազմաթիվ սևագիրները: Այս մեկն էլ կարող ենք Կոմիտասի ժառանգության անհայտացած մասի բազմաթիվ նյութերի շարքին դասել՝ առանց մոռանալու այն հանգամանքը, որ վավերագիր 352-ում ընդգրկված երգերն իրենցից ներկայացնում են արդյոք բոլոր այն երգերը, որոնք Կոմիտասը հավաքել էր Կուտիմայում: Գուցե նաև կան ուրիշներ, որոնք նա ինչ-ինչ պատճառներով չէր ընդգրկել 352 համարի ձեռագրում: Հիշենք, որ այս տետրի մեջ հետագայում էլ գրառումներ և արձանագրություններ է կատարել:

Վերջին երկու երգերը ակնհայտորեն արձանագրված են Կուտիմայից հավաքած երգերի մաքրագրումից հետո, բայց ո՞ր ժամանակին, այլևս ճշտելը հնարավոր չէ: Միայն 138-րդ էջի գրառումները, որոնք վերաբերում են «Վարդան» օպերային, հաստատապես չեն կարող 1892-ին պատկանել, չնայած որ մի քանի տեղ սխալմամբ այդպես է հիշատակվում, այդ թվում նաև Ռ. Աթայանի պես ճանաչված մասնագետի մոտ: Քանի որ այս թվականներին Կոմիտասը այդպիսի մի ձեռնարկման անհրաժեշտ մասնագիտական պատրաստությունը տակավին չուներ և ամենևին էլ իր չափը չիմացող մեկը չէր և ուներ այն համոզմունքը, որ յուրաքանչյուրը իր մասնագիտության մեջ առավելագույնս պատրաստված պետք է լինի: Բացի այդ, իր այս օպերայի համար ընտրած երեք երգերի մոտ կատարած ճշումներում հանդիպում ենք գերմաներեն բառերի: Ակնհայտ է, որ մինչև Գերմանիա մեկնելը Կոմիտասը որևէ բառ գերմաներեն չէր իմանում: Այս ամենից կարող ենք հետևություն անել, որ այս գրառումները «Վարդան» օպերայի մասին կատարված պետք է լինեն իր՝ Գերմանիայում ուսանելու շրջանում կամ էլ դրանից հետո: Ավելացնենք նաև, որ վերջում գտնվում է երգերի ցանկը, որը պարունակում է 66 երգի անուն: Ստորև բերում ենք կատարողների ցանկը՝

1. Հարություն Էֆենդի Հեքիմյան - 12 երգ
2. Հարություն աղա Սողոմոնյան - 5 երգ
3. Խաչիկ Էֆենդի Բալանյան - 6 երգ
4. Ահմեդ Էֆենդի Սավլը - 1 երգ
5. Գյուլինե Սողոմոնյան - 3 երգ
6. Զմրուխտ Սողոմոնյան - 3 երգ
7. «Օւեքերջի» Թորոս աղա - 4 երգ
8. Հակովիկ Թոփչյան - 1 երգ
9. Մաթևոս Փափազյան լուսանկարիչ - 3 երգ
10. Թագուհի Խդրյան - 7 երգ
11. Նազարեթ Էֆենդի Քայայան - 1 երգ
12. Ներսես Էֆենդի Գրիգորյան - 3 երգ
13. Մարիամ Հայրապետյան - 1 երգ

14. Մարիամ Խորյան - 1 երգ
15. Հակոբ Մելքիսեբեքյան - 1 երգ
16. Գառնիկ Էֆենդի - 1 երգ
17. Արմենակ Էֆենդի Տիրումի - 4 երգ
18. Մարտիրոս Էֆենդի Վարպետյան - 2 երգ
19. Թագուհի Բոյաջյան - 1 երգ
20. Տիկին Քարոլինե - 1 երգ
21. Հարություն Էֆենդի Հայրապետյան - 1 երգ:

Կոմիտասի արխիվում գտնվող թուրքական երգերի գրառումներից ամենածավալունը (նույնիսկ 352-ը գերազանցող) կոմիտասյան ֆոնդի 353 համարի ձեռագիրն է: Այս վավերագիրը բաղկացած է գլխավորապես մի տեսրից ու բազմաթիվ առանձին թերթերից: Տեսրը թերի է, դրա հետ միասին պակասում են մեկ մի քանի երգեր: Մենք չգիտենք, իհարկե, թե տեսրից քանի էջ է պակասում և այդ էջերում քանի երգ կար գրանցված: Ամեն դեպքում ինչ որ պակասում է, պետք է առայժմ կորած ընդունենք, քանի որ այս գրառումներում տեղ գտած եղանակները, բացի 5 երգից, չեն կրկնվում ոչ մի տեղ: Այս վավերագիրը բաղկացած է 48 թերթից: Գրված է թանաքով, հայկական մոր ձայնամիջերով: Այստեղ գրանցված են 71 թուրքական երգ՝ բոլորը «շարքը»-ներ: Մի շարք երգերի հեղինակների անունները նշված են, դրանց ավելացան մեր կողմից ճշտվածները, և այսպիսով ճշտված հեղինակներով երգերի թիվը այժմ հասնում է 52-ի:

1. Լևոն Էֆենդի խանջյան - 2 երգ
2. Նիկողոս աղա - 5 երգ
3. Միրալայ Ասլմ բեյ - 1 երգ
4. Հաջը Արիֆ բեյ - 9 երգ
5. Ռըփաթ բեյ - 3 երգ
6. Հաշիմ բեյ - 2 երգ
7. Քանոնի Գիրքոր - 1 երգ
8. Բյույուք Հոջա (մեծ դասատու) - 2 երգ
9. Քարա (սև) Իսմայիլ աղա - 1 երգ
10. Համամիզադե Իսմայիլ Դեդե Էֆենդի - 3 երգ
11. Սանթուրի Էթհեմ բեյ - 1 երգ
12. Քազասքեր Մուստաֆա Իզգեթ Էֆենդի - 1 երգ
13. Ազիզ Էֆենդի - 2 երգ
14. Շեֆքի բեյ - 4 երգ
15. Քյոմուրջու Ջադե Հաֆըզ Մեհմեդ Էֆենդի - 1 երգ
16. Դելլալզադե Իսմայիլ Էֆենդի - 5 երգ
17. Թադետու Էֆենդի - 3 երգ
18. Ջիվան աղա - 2 երգ
19. Ֆայիկ բեյ - 1 երգ
20. Բըշաքչը Հաֆըզ Մեհմեդ Էֆենդի - 1 երգ

21. Թամբուրի Ալի Էֆենդի - 1 երգ

22. Քանուգի Կարպիս Էֆենդի - 1 երգ:

Այստեղ կան ոչ միայն երգեր, այլ նաև «փեշրեֆ»-ներ (նվագարանային): Սրանք 9-ն են, որոնցից միայն մեկի հեղինակն է նշված: Դա Նիկողոս աղայի «փեշրեֆ»-ն է: Տեստում թերթերի բացակայության պատճառով 6 երգ է մեզ հասել թերի վիճակում. պակասում է սկիզբը կամ վերջը, կամ էլ պակասում է մեղեդին, և պահպանված են միայն բառերը 2-րդ տմից սկսած:

Կոմիտասի ֆոնդի 354 համարի վավերագիրը բաղկացած է մեկ թերթից՝ դարձյալ գրված հայկական մոր ձայնանիշերով: Այս նյութը սևագիր է, որտեղ արձանագրված է մեկ երգ, որի հեղինակն է Օեֆքի բեյը: Բացի այդ մի երգից, այնտեղ արձանագրված են էլի երկու եղանակի բեկորներ, առանց բառերի: Նյութի ստացման թվականն է 7-8-1952, այսինքն նույնը, ինչ 348 և 352 համարները:

Ձեռագիր 443 համարը մեզ համար շատ հետաքրքիր և արժեքավոր է այն առումով, որ նրա պարունակած երկու թուրքական երգերը պատկանում են Կոմիտասի գրչին: Երկուսն էլ փառաբանություններ են՝ մեկը «հարեքեթ օղլուսու»²-ի հասցեին, իսկ մյուսը՝ օսմանյան կայսրության մեմապետին՝ «փադիշահ»-ին: Ի տարբերություն մյուս բոլոր հավաքված թուրքական երգերի, Կոմիտասի ստեղծագործությունները, ինչպես որ ակնկալելի է, բազմաձայն են, գրված խառը խմբի համար: Երգերն այստեղ ներկայացված են ոչ ամբողջական, այլ տարբեր մասերով ու խառը վիճակով: Նույնիսկ տեքստը տեղ-տեղ թերի է արձանագրված:

Հիշատակումներ կան այն մասին, որ այս երգերը կատարվել են Պոլսո համերգների ժամանակ³:

² - Ահա ուզածդ «Օրհմեալ է Աստուած» և մի քանի մոր «շարքը»-ներ

Ահա տեստակումս եղածները սոքա էին, որոնք մեք չէինք հաւանած, ուրիշ չկայ, սորանից լետոյ էլ ես կարողացածիս չափ ձայնագրեցի Տօթթէօր-ը, որը թէեւ ուշշագ եղանակ գրուած է եւ ուշշագին էլ ելեւէջը ձեռքիս ունէի, բայց երբէք չկարողացայ յարմարեցնել, այլ Չըղըրկըններում արմոնքի վրայ փորձելով ըստ այնմ ձայնագրեցի, գիտեմ, չափերը բոլորովին սխալ պիտի լինեն, բայց դու ինքդ ուղղիր եւ ճիշդը գտիր, ինձ չմեղադրես, ապա թէ ոչ խէրդ կանիծես հա ... մինչեւ ձայնագրելս գլուխս տռաքեց, էլ զտոնածիօղլի, իշտէ իմս այսչափ է, դու այլեւս սոքա ամէնքն էլ կարգի ու կանոնի մէջ դիր, ահա այդ պիտի լինի քո հըմտութիւնը. սօրմայլն-ը շատ հաւանեցի, շատ ճիշդ գտած էիր, Կոլոմպուսին Ամերիկան գտնելու պէս, բայց Նիհանսըզըն էլ կարգ ու կանոնի մէջ դիր, ինձնից ուրիշ մի բան մի հարցնիր:

Յ. Հ.

- ինչպէս որ տեստակումս գրուած է, ճիշդ այնպէս արտագրած եմ, ամենեւին ուշադրութիւն չդարձնելով սխալին, այլ այդ քեզ եմ թողած, գիտցած եղիր:

Գ.Ա.Թ. Կ.Ֆ. 348

³ «Հարեքեթ օղլուսու»-շարժման բանակ: Սա այն բանակն է, որն 1908-ի «մշտութիւն»-ի ժողովրդավարական օրենքների ընդունվելուց հետո, 31 մարտի 1909-ին Պոլսո մեջ առաջ եկած հետադիմականների անկարգությունները զսպելու նպատակով Թեսաղոնիկեից (թրք. - Սելանիկ) շարժված ու Պոլիս մուտք գործելով բոլոր խռովարարներին ոչնչացրած է: Դրա հետևանքով է, որ զահրանկեց եղավ նաև Աքդուհամիդ II-ը:

Կոմիտասի ֆոնդի 444 համարի վավերագիրը, որը բաղկացած է երկու թերթից, պարունակում է դարձյալ երկսեռ խմբի համար գրված, անտարակույս դարձյալ Կոմիտասի գրչին պատկանող, բազմաձայն մի երգ, բաղկացած բեկորներից, սևագիր վիճակում: Բառերը շատ մասերում պակասում են, իսկ գոյություն ունեցողներն էլ այնքան վատ ընթերցելի են, որ մեզ չհաջողվեց ամբողջությամբ վերականգնել տեքստի այդ մասերը, բայց, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ սա էլ է մի փառաբանություն, առանց թերևս պարզ լինելու, թե ում է ուղղված:

445 համարի վավերագիրը պարունակում է դարձյալ Կոմիտասի ստեղծագործությունները, ընդ որում, շարժման բանակի մասին երգի բազմաթիվ ու բազմիցս կրկնվող բեկորներից է բաղկացած այս նյութը, որտեղ կան նաև հայկական ժողովրդական երգերի մի քանի բեկոր:

Կոմիտասի ֆոնդի 522 համարի վավերագրի պարունակությունը ևս Կոմիտասի ստեղծագործությունն է: Այս անգամ մեզ հասել է մի մեներգ դաշնամուրի ընկերակցությամբ: Այս երգը գրված է ուրիշի ձեռքով: Ինչպես երևում է, այս անձը այնքան էլ հմուտ չի եղել երաժշտության ասպարեզում, քանի որ այս նյութը լի է ամենահասարակ սխալներով: Նույն նյութը մեզ ներկայացնում է նաև 523 համարում, բայց տարբեր տոնայնության մեջ ու բազմաթիվ նշումներով: Ակնհայտ է, որ սա ավելի մախմական մի տարբերակ է, որից հետո փոխադրվել է մի ուրիշ տոնայնության, որտեղից էլ արտագրվել է 522-ը:

Իր բոլոր թերություններով հանդերձ, նյութ 522-ը մի գլխավոր առավելություն ունի՝ վերևում նշվում են երգի հորիմողի ու բանաստեղծի անունները, իսկ նոտաների տակ գրված է տեքստը, որը պակասում է 523-ի մեջ: Միայն թե այս ամենը կատարված է արաբատառ՝ «հին թուրքերեն»: Մինչև հանրապետության հռչակումից հետո կատարված փոփոխությունները, որոնցից մեկն էլ լատիներեն տառերին անցնելն էր, օսմանյան պետության մեջ օգտագործվում էր արաբերեն այբուբենը, բայց հարմարեցված թուրքական հնչյունաբանությանը, որի պատճառով էլ արաբերենի իմացությունը ինքնին չի բավարարում «հին թուրքերեն կամ «օսմաներեն» գրելուն կամ կարդալուն:

Այս երկու նյութերի մեջ արձանագրված երգը Կոմիտասը հորինել է թուրք բանաստեղծ ու պատգամավոր Մեհմեդ Էմինի (Յուրդաքուլ) մի բանաստեղծության խոսքերով: Օտտ հետաքրքիր է այն հանգամանքը, որ այս բանաստեղծությունը (ինչպես Մեհմեդ Էմինի գրեթե բոլոր բանաստեղծությունները) ամբողջովին հիմնված է ազգայնական, թուրմական (պանթուրքական) գաղափարների վրա, որտեղ արտահայտվում են թուրմական, ամբողջ Միջին Ասիայում տարածվելիք մեծ թուրքական պետության, միտքը: Այս նյութի ու դրա հետ կապված մեր հետազոտության արդյունքների մասին ծրագրում ենք առաջիկայում ավելի մանրամասն անդրադարձալ:

Վերջապես հասնում ենք վերջին վավերագրին՝ 745 համարին: Այս ձեռագիրը բաղկացած է երկու թերթից, որտեղ արձանագրված են չորս թուրքական երգ: Ի տարբերություն մյուս բոլոր գրառված թուրքական երգերի, բացի Կոմիտասի սեփա-

կամ ստեղծագործություններից, այս չորս երգերը գրված են Եվրոպական ձայնագիշերով: Երկուսը մի փոքր տարբեր եղանակով գոյություն ունեն մյուս ձեռագրերի մեջ՝ մեկը 352, իսկ մյուսը՝ 353 համարներում: Այս երգերից մեկը պատկանում է Իսմեդ բեյին, երկրորդը՝ Քյոմյուրջյուզադե Հաֆըզ Էֆենդիին, մյուսը՝ Օեֆքի բեյ կամ Քանունի Կարպիս Էֆենդիին, վերջինս էլ՝ Օեֆքի բեյին կամ Իսմեդ բեյին:

Ընդհանրապես այս հեղինակների հետ կապված անորոշությունը, երբ մի երգի համար երկու հավանական անուններ են մշտվում մեր կողմից, զալիս է այն հանգամանքից, որ կա՛մ ձեռագրում մշտվածի ու մեր մշտածի միջև կամ տարբերություններ, կա՛մ էլ տարբեր վավերագրերում մշտվում են տարբեր անուններ: Բացի 522 ու 523 համարի ձեռագրերում, բոլոր երգերի տեքստերը արձանագրված են հայատառ թուրքերենով: Սույն գրառումների մեջ ընդգրկված ստեղծագործությունների հեղինակներից թուրք երաժշտությանը ծառայած ընդհանուր առմամբ հետևյալ քսան հորինողներն են մշտված, որոնցից չորսը՝ հայազգի.

1. Սամթուրի Էթհեմ բեյ
2. Համամիզադե Իսմայիլ Դեդե Էֆենդի
3. Հաֆըզ Մեհմեդ Էֆենդի
4. Հաշիմ բեյ
5. Դելլազզադե Հաշը Հաֆըզ Իսմայիլ Էֆենդի
6. Թամբուրի Հաֆըզ Ալի Էֆենդի
7. Օեֆքի բեյ
8. Նիկողոս աղա
9. Հաշը Մեհմեդ Արիֆ բեյ
10. Զիվան աղա
11. Լևոն Խանջյան Էֆենդի
12. Քեմանի և Քանունի Թադևոս Էֆենդի Էմքսերջյան
13. Մուստաֆա Իզզեթ Էֆենդի
14. Քարա Իսմայիլ աղա
15. Ռեֆաթ բեյ
16. Հաշը Մուստաֆա Ասըմ բեյ
17. Հաշը Ֆայիկ բեյ
18. Աբդուլքադիր Մերակի
19. Քանունի Գրիգոր Մեհթերջյան
20. Ազիզ Էֆենդի:

Այս հոդվածով փորձեցիմք Կոմիտասի ստեղծագործական գործունեության քիչ հայտնի մի կողմը մասամբ լուսաբանել: Այստեղ կարելի է տեսնել, թե ինչքան բազմակողմանի էր Կոմիտասի տաղանդը, որը ոչ միայն ծառայեց հայ ազգին, այլ նաև օտարներին, տվյալ դեպքում՝ թուրք ժողովրդին, որի շնորհակալությունը բավականին յուրատեսակ եղավ, ինչպես բոլորս քաջ գիտենք: